# ՀԱՆԴԷՍ ԲԱՐՈՅԱԿԱՆ

---

### ՎԻՊԱՍԱՆՈՒԹԻՒՆ

## ԾՆՈՂԱՍԻՐՈՒԹԻՒՆ ԱՆՆԱՅԻ

(Տես Պր. ԼԹ. էջ 285):

Երկրորդ օրն արևն ծագածին պէս՝ տիկին Սէնթ-Անժ և իւր աղջիկն կառքն հեծան. մարքիզուհին շատ վշտացաւ տեսնելով որ անցագրին մէջ իրենց ուրիշ պատուանուն տրուած չէր՝ բայց եթէ «քաղաքացի» Թոմա անունն: Բայց առանց փորձանաց Սըտան բերդաքաղաքն հասան. սակայն ուզածնուն պէս մէկէն մարքէզն չկարացին տեսնել. որովհետև բանտարկելոց հետ առանց հրաման ունենալու տեսնուիլ չէր լինէր, և այս հրամանս բերդակալէն խնդրելու էր. վասն զի քաղաքն ալ պաշարման վիճակի մէջ էր: Մարքիզուհին ու աղջիկն տրտում տխուր տուն դարձան. սակայն կը յուսային որ բանտարկեալն պիտի իմանար որ իւր երկու սիրելի անձինքն Սըտան հասած էին. վասն զի բանտէն ելնելէն յառաջ Աննա բանտապանին մօտեցելով՝ անուշիկ ձայնով մի, որ այս մարդս իւր կենաց մէջ բնաւ լսած չէր, աղաչեց նմա որ մարքէզին իմացնէ թէ կինն ու աղջիկն հասել էին, և առանց ժամանակ կորուսանելու՝ իւր ազատութեանն համար պիտի աշխատէին: Աննայի գեղեցկութիւնն, մանկութիւնն ու անմեղ կերպն՝ բանտապանին պղնձի սիրտն շարժեցին. մարքիզուհին ալ նորա ձեռքն ոսկիով մի օծելուն պէս՝ ալ բոլորովին քաղցրացաւ, և խոստացաւ որ գիշեր չեղած նմա պիտի իմացնէր եղածն:

Երկրորդ օրն Աննա և իւր մայրն սգաւորի հագուստով՝ ելլին բերդակալին գնացին որ քսանևութ կամ երեսուն տարուան քաղաքավար սպայ մի էր, թէպէտ և կարգէ դուրս խստութիւն կ'երևէր իր ամեն շարժմանց մէջ: Երկու տիկնայքը տեսնելուն պէս, նոցա առջևն ել և մարդավարութեամբ հարցուց թէ ինչ էր ուզածնին. և երբ մարքիզուհին իրենց գալուն պատճառն կ'իմացնէր, Ժերվալ բերդակալն աչքն Աննայի վերայ յառած հիացմամբ զնա կը դիտէր՝ զարմանալով նորա անկեղծ և անմեղ դիմաց վերայ՝ որ սրտին մաքրութիւնն կը յայտնէր, կը զարմանար նորա գծագրութեան քաղցրութեանն և ճակտին վերայ նկարեալ անբծութեան վերայ, ևս առաւել կերպին ամօթխածութեան, վախկոտութեան ու համեստութեան վերայ՝ որ կարծես թէ զինքն պաշտպանող շող մի էր: — Երբ մարքիզուհին խօսքն աւարտեց, բերդակալն Ժերվալ՝ զօրականի մի դառնալով որ գրասեղանին առջև նստած կը գրէր՝ ասաց. «Հայրենակից, շուտ հրամանագիր մի գրէ այս քաղաքացւոյս և դստերն համար՝ որ ուզած բանտարկելոյն հետ տեսնուին»:

— Բանտարկելոյն անունն ինչ է, հարցուց զօրականն:

— Սէնթ-Անժի մարքէզն, պատասխանեց մարքիզուհին:

— Մարքէզ, մարքէզ, մրմռաց քթին տակէն գրագիրն՝ խոշոր դատագիրք (Dossier) մի թղթատելով. հոս Մարքէզ անուն չկայ... հա, անուանիկ, ասաց ձայնն բարձրացնելով, Թոմա անուանեալ Սէնթ-Անժ.... Սակայն հրամանագիր տալն անկարելի է. երեկ չէ առջի օրէ 'ի վեր եկակոչ եղած է իրեն՝ այսօր յեղափոխական ատենին առջև ելլելու ճիշդ օր հասարակին. և հաւանականաբար վաղուան օրն հրեշտակաց հետ միայն պիտի տեսնուի այդ ազնուական բանտարկեալն. ասաց գոռն ձայնով և սատանայական ծիծաղով մի: Այս խօսքերս կայծակի հարուածի մի պէս՝ Աննայի բուղխ սիրտն վիրաւորեցին, որ լսածին պէս՝ մօրն գիրկն անկաւ մարեցաւ:

— Հայրենակից, ասաց Ժերվալ բարկանալով. զօրականն իւր պարտքն կատարելու է՝ որչափ ալ խիստ լինի, բայց ցուրտ բարբարոսութիւնն՝ դահճի գործ է: Շուտ մարդ ղրկէ հասարակաց ամբաստանչին՝ որ Թոմա Սէնթ-Անժի համար տրուած հրամանն ետ ձգել տայ, նորա դատագիրն ալ թող ինձ բերէ. ես անձամբ պիտի քննեմ այս գործս:

Գրագիրն ակամայ հնազանդեցաւ, և հրամանն գնաց, զոր հասարակաց ամբաստանիչն առածին պէս՝ սա վայրենի խօսքն բերնէն թռուց. «բերդակալն ազնուականաց պաշտպանն է. թէ որ օր մի իւր գլուխն ալ չթռցնեն՝ ազատած գլուխներուն տեղ՝ ես ալ մարդ չսեպուիմ. ժողովուրդն մատնողներն գթութեան արժանի չեն»:

Սակայն բերդակալին տան կանայք Աննայի վերայ վազելով՝ հազիւ շատ խնամքով նորա խելքն գլուխն բերել էին, որ աչուըներն բացածին պէս գոչեց. Ո՛վ հայր իմ, ո՛վ խեղճ հայրըս. այս խօսքերովս սրտին ցաւն դուրս պոռթկաց և թափած արցունքէն սիրտն սակաւ մի

digitised by A.R.A.R.@

թեթեւցաւ. և երբ բոլորովին հանդարտեցաւ, բերդակալն քովին երթալով ասաց. Մի յուսահատիր տրտմութեամբ, Օրիորդ, և ներէ զօրականի մի խիստ համարձակութեանն՝ որ ինք իր անձին անողոքելի լինելով՝ այլոց հետ քաղցրութեամբ վարուելու չէ վարժած. քոյ հօրդ գալըն ես պիտի տեսնեմ, և ապահով եղիր որ արդարութիւնն նմա չեմ զլանար. առ ժամս գնա քոյ ներկայութեամբ զինքն մխիթարէ:

Աննա յանկարծ խորին տրտմութենէն յուսոյ երջանկութեան հասնելով՝ բան մի չկարաց պատասխանել բերդակալին. այնչափ սիրտն եռացած էր՝ որ լեզուն բռնուած էր. բայց հրեշտակային նայուածքով մի երախտագիտութիւնն յայտնեց:

Բերդակալն ալ կուզէր յայտնել իւր ուրախութիւնն՝ այսպիսի դիպուածի մի մէջ Աննայի և նորա մօրն ծառայութիւն մի անել կարողանալուն համար. բայց բաւական սեպեց մարքիզուհւոյն ասելու՝ որ ձեռքէն եկածն պիտի անէր իւր այրն ազատելու համար:

Ո՛վ կրնար նկարագրել մարքէզին և իւր կընոջ և աղջկան իրարու հետ առաջին անգամ տեսնուելուն՝ գորովական և ցաւալից տեսարանն: Սէնթ-Անժ որ լաւ գիտէր թէ այն արիւնարբու ատեանն ելնողներէն մին անգամ ետ դարձած չէր, բոլոր նախընթաց օրն գիր գրելով անցուցել էր. և երբ երեկոյեան դէմ բանտապանն իրեն իմացուց իւր կնոջ և աղջկան հասնելն, այս լուրն զինքն ուրախացնելու տեղ աւելի տրտմեցուց, որովհետև նոցա գալն ուրիշ բան չէր՝ բայց իր մահուանն ականատես լինել: Նոցա ներս մտած ժամանակ՝ ինքն երկար և սարսափելի հոգեվարքի մի մէջ կը տագնապէր ու կը սպասէր որ գան զինքն ատեան տանելու՝ մանաւանդ թէ սպաննելու: Բայց իւր կնոջ ու աղջկան վերայ ունեցած սէրն՝ որ աւելի սաստիկ էր՝ քան զինքն սարսափեցնող երկիւղն՝ քանի մի վայրկեան հաճոյից տեղի տուաւ. գրկեց զնոսա ուժով իր բազկաց մէջ իր կուրծքին վերայ սեղմելով և կը գոչէր. «Ա՛հ օրհնեալ է Աստուած որ մեռնելէս առաջ՝ սա վայրկենական երջանկութիւնս ինձ շնորհեց. օրհնեալ է Աստուած »:

— Սիրելի, ասաց մարքիզուհին, որ առջի բերան յուզման սաստկութենէն լեզուն բռնուած էր, դեռ յուսերնիս չկտրեմք. կերևի թէ բերդակալն մեր վերայ կը ցաւի. քոյ և մեր վիճակն նորա ձեռքն է, ես նորա մարդասիրութեան վերայ մեծ յոյս ունիմ:

— Ես այդպէս չեմ յուսար, ասաց մարքէզն. մի թէ բերդակալն ինքզինքն կարէ՞ վտանգի մէջ ձգել՝ անծանօթ մարդ մի ազատելու համար. լրտեսներ ու մատնիչներ նորա բոլորտիքն առած են:

— Հայր իմ, ասաց Աննա նորա խօսքն կտրելով, ես վստահ եմ որ նա զքեզ թշնամեացդ ձեռքէն պիտի ազատէ. ինքն ասաց Քոյ այրդ դերէ ազատեմ, և այնպէս սրտանց հաստատ և ազնուական կերպով ասաց այս խօսքերս՝ որ զիս համոզեց: Ա՛հ սիրեցեալ հայր, սակաւ ժամանակէն քոյ շղթաներդ պիտի քակուին, և դու դարձեալ քոյ սիրական ընտանեացդ մէջ պիտի գտնուիս:

— Երանի՜ թէ ասացածդ ճշմարիտ լինէր, սիրելի Աննա, պատասխանեց մարքէզն, ո՞ւր էր թէ օր մի ասացածիդ պէս իմ ընտանեացս մէջ գտնէի ինքզինքս. բայց որչափ արգելք կըտեսնեմ այս ըղձիցս կատարմանն:

## ԳԼՈՒԽ Զ.

### Երեսփոխանք ժողովրդեան.

Բոլոր օրն սաստիկ հոգերու և մտատանջութեան մէջ անցուցին. որովհետև որչափ ալ բերդակալին խոստմունքն մարքիզուհւոյն վստահութիւն տուեր էին՝ սակայն քանի որ իւր այրն շղթաներու տակ էր՝ չէր կարող հանգիստ լինել. մարքէզն ալ դրսէն հանդարտութիւն ցուցանելով՝ իւր վախն կուզէր ծածկել, որպէս զի կնոջն տրտմութիւնն չյաւելու և զաւկին պատրանքն չփարատէ: Եւ սակայն իր յոյսն ալ բոլորովին չէր հատաներ. և երբ ատեանն երևելու ժամն անցաւ և չկոչեցին զինքն՝ համարեցաւ թէ բարեյաջող փոփոխութիւն մի եղած էր իւր վիճակին: Իսկ Աննա բոլորովին վստահ էր. «Աստուած իմ արտասուացս ողորմեցաւ, ասէր, ինքն ինձ գտնել տուաւ մօրս սէրն, անշուշտ հայրս ալ ինձ պիտի շնորհէ »:

Յիրաւի Աննայի ակնկալութիւնն լիապէս կատարեցաւ՝ վեհանձն Ժերվալի ջանքովը. վասն զի մարքէզին դէմ եղած փուրսիշն (ամբաստանութեան գիրն) իրեն բերել տալով, տեսաւ որ այնոր մէջ յանցանաց ստուերն անգամ չկայ, ոչ միայն բարոյականի, պատուոյ և արդարութեան դէմ, այլ և նոյն ժամանակի խռովարար կառավարութեան դէմ՝ որ սաստիկ խստութիւն կը բանեցնէր այն անձանց դէմ որոց հարստութիւնն կուզէր յափշտակել և զիրենք հալածել: Այսպէս լինելուն՝ թէպէտ և կարող էր ինքն անմիջապէս հրաման տալ որ մարքէզն ազատ թողուի, բայց գիտէր որ քաղքին մէջ շատ թըշնամիներ ունէր՝ որ արդէն յայտնապէս կը մեղադրէին զինքն թագաւորականաց կողմն բռնելուն համար. վասն զի այն թշուառ ժամանակներն՝ այն իշխանաւորն որ անմիջապէս մահուան չէր դատապարտէր՝ հայրենակցէ մի ամբաստանեալ մարդն՝ ինքն կասկածելի լինէր և երկրէն դուրս կը քշուէր: Սակայն թէպէտ և Ժերվալ այս վախերս բանի տեղ չէր դնէր՝ որ իւր խղճին և համոզման դէմ դնել կարող չէին, այսու ամենայնիւ խոհեմութիւնն ալ ձեռքէ ձգել չէր ուզէր՝ չարախօս լեզուներն կարկելու համար:

Իաշնադիր ժողովին հիւսիսային գաւառներն երկու երեսփոխան ղրկած էր՝ որպէս զի Մէզիէրի մօտերն հաւաքուելու բանակին համար զօրաժողով անեն. Ժերվալ այս երկու հոգին իր տունն հրաւիրեց, և նոցա սիրտն շահելու համար՝ առատ նախաճաշ մի հանեց՝ որոյ համեմունքն էին հասարակապետական խօսակցութիւնք, և եղբայրակցութեան, ազատութեան կամ մահու անընդհատ բաժակներ: Երբ այս մարդիկս այնչափ անկեցին՝ որ խելքերնին գըլխներնէն գնաց և դատի ու ամբաստանութեան վերայ խօսելու կարողութիւն չունէին, Ժերվալ Թամայի դատին խօսքն բացաւ՝ համարելով թէ

digitised by A.R.A.R.@

նոքա իրեն պիտի Թողուին որ ուղածին պէս այն գործն աւարտէ, և կամ իւր ասացածներուն պիտի հաւանէին։ Նաև յառաջագոյն Թոմայի անպարտ գտուած լինելուն գիրն պատրաստած էր, որում նոքա միայն իրենց ստորագրութիւնն պիտի դնէին. բայց այս երկու երեսփոխանները՝ որոց մին յառաջագոյն մսագործ էր և միւսն նաւաստի՝ մոլոր կլլող մարդիկ չէին երևէր։ — «Հաւատա ինձ, հայրենակից բերդակալ, ասաց մսագործն, այս Թոմայի դատին մէջ տարակոյսեր գոն. ես որոշ և պայծառ չեմ տեսներ եղածն։

— Այո, պատասխանեց նաւաստին ճիշդ ընկերոջ խօսքերն կրկնելով։

— Եթէ այսպէս է, ասաց առաջինն, սակրի մի հարուածն ամեն բան կ'ուղղէ, կ'աւարտէ։

— Այո, այնպէս է, ասաց դարձեալ նաւաստին, սակրի մի հարուածն...

— Այդ ինչ է, ասաց յանկարծ բերդակալն սաստկութեամբ. դուք ինքնին տեսէք թէ իրն տարակուսական է, և յետոյ մահուան կը դատապարտէք խեղճ մարդն. ոչ, մեռնիլս աչքս կառնում այդ բանդ չեմ կարող անել։

— Կաց. կաց, հայրենակից, ասաց մսագործն, ինչու այդպէս կը բարկիս. եկ այսօր ճաշ մի դնենք և խօսքերնիս հասկնանք. դու մեզ այսօր համեղ ճաշիկ մի տուիր՝ մեզ ալ չվայելէր որ քեզ ապերախտ լինինք։ Նայէ սա վառարանին վրայ փոխնոցի խաղ մի կայ, կուզե՞ս որ անով քոյ բանտարկելոյդ բաղդն փորձենք[1]. թէ դու վաստկիս՝ բանտարկեալն քոյդ է, ինչ որ կուզես գրէ նորա համար՝ մեք պատրաստ եմք ստորագրելու. իսկ եթէ կորուսանես՝ բանտարկելոյն բանն բռուած է։ Կը հաւանիս ասացածիս։

— Շատ լաւ, ասաց բերդակալն՝ միտքն դնելով՝ որ եթէ բաղդն իրեն չյաջողի՝ այն ատեն իւր ամեն իշխանութիւնն բանեցնէ։ «Բարձր թիւ քաշողն պիտի վաստկի, ասաց մսագործին. հիմա թիւերն գլխարկի մի մէջ կը դնեմք, և երկուքս մի մի հատ կը քաշեմք։

— Շատ լաւ, յաղթութիւնն բարձր թիւ քաշողին է, կրկնեց երեսփոխանն։ Եւ ձեռքն գլխարկին մէջ երկայնելով՝ զոր իւր ընկերն գլխին բարձրութեամբն բռնած էր՝ կոճակին մէկն քաշեց ու կատաղի ուրախութեամբ գոչեց «Վեց և հինգ»։

— «Վեց և վեց» ասաց բերդակալն հանդարտութեամբ։

— Նայիմք. վեց և վեց, իրաւ է, հայրենակից վաստկեցար. բանտարկեալն բաղդաւոր է եղել ասելով, երկու երեսփոխանք ալ ազատութեան վճռոյն ներքեւն ստորագրեցին։

Բերդակալն շուտով լուր ղրկելով՝ եղածն Մարքիզուհւոյն իմացուց. միանգամայն ներումըն խնդրելով որ այս աւետիքս անձամբ չէր կարող բերել. որովհետև լրտեսներն չորս դիս առած ամեն գործս կը դիտեն, ասէր, և փոքրիկ անխոհեմութիւն մի կարէ արգելք լինել ինձ ձեռքէս եկած բարիքն առնելու։ Դարձեալ կ'իմացընէր որ ամենակարևոր բան մի ունելով նմա հաղորդելու կը փափաքէր զինքն տեսնելու։

[1] Այս դէպքս պատմական ստուգութիւն է։

Տիկին Սէնթ-Անժ իւր աղջկան հետ միասին շուտով ելին ու եկին բերդակալն տեսնելու և իրենց շնորհակալութիւնն մատուցանելու։ — Դուք ինձ շնորհակալութեան պարտք չունիք, տիկին, ասաց վեհանձն սպայն, ես իմ պարտքես զատ ուրիշ բան չարարի. ինքզինքս երջանիկ կը համարիմ որ կարող եղէ իմ մտերմութիւնս ձեզ ցուցանել՝ որում արժանի էիք, և բոլոր կենացս մէջ այս աւուր յիշատակս պիտի չմոռնամ։ Ձեզ տեսնելու փափաքս՝ այս էր, տիկին, որ կարևոր բան մի ունելով ձեզի հաղորդելու՝ գրով չէի կարող ձեզ իմացնել, և որ ձեր ու իմ մէջս միշտ ծածուկ ու գաղտնի պիտի մընայ։ Քոյ անունդ վերաբերեալ դատագրոյն մէջ՝ գրուած մի ալ կայ, որ թէպէտ ճիշդ խօսելով ամբաստանութիւն չկարէ ասիլ. բայց այնոր վնասներն կարող է յառաջ բերել. այս գրուածքիս ուրին կուզէ և ամենայն ջանիւ կը պահանջէ՝ որ ձեր անունդ վրայ դատաստան բացուի ինչ ալ ըլլի թող ըլլի ասելով. որ կը նշանակէ՝ նաև եթէ գլխապարտութեամբ աւարտի դատաստանն։ Այս գրուածքիս ներքև ստորագրութիւն չկայ, բայց այն գրուածքին հետ թուղթ մի ալ կայ՝ զոր Փարիզու հասարակաց ամբաստանիչն իւր Սըտանի մէջ եղած գործակցին կը գրէ, և այն նամակին մէջ ասի՝ թէ վերոյիշեալ գրուածքին հեղինակն Ֆորթօն անուամբ մէկն է։

— Ֆորթօն, գոչեց մարքիզուհին զարհուրանօք. ո՜հ որպիսի անօրէնութիւն։

— Այս բանս ձեզ իմացնելու պատճառն՝ այն է, տիկին, որ կարող լինիք զգուշանալ. երբ մեր թշնամին կը ճանաչեմք, կարեմք ինքզինքնիս պաշտպանել. ահա այս բանիս համար ես ալ այս գաղտնիքս ձեզ յայտնեցի։

— Շնորհակալ եմ քեզ, տէր, իմ և գերդաստանիս կողմանէ, ասաց մարքիզուհին. և բաց յայսմանէ ես ալ ձեզ սիրտս պէտք է յայտնեմ՝ ինչպէս որ պարագաներն կը պահանջեն։ Այդ Ֆորթօն ասացածդ, այդ վատանուն մատնիչն՝ իմ փեսայս մեծ աղջկանս այրն է։ Քանի մի ժամանակէ 'ի վեր մարքէզն նորա անհաւատարմութեան վրայ կը կասկածէր, բայց ես նորա յանցաւորութեանն չէի հաւատար. այս օր ամեն տարակոյս փարատեցաւ։

— «Թշուառակա՜ն մայր», ասաց բերդակալն կամաց մի՝ զարմանքէն ու զարհուրանքէն լուռ և ապշած մնալով։ — Վայրկեան մի լռութիւն լինելէն ետև, մարքիզուհին յաւել ասելու. «Այս նողկալի գաղտնիքս ձեզ իմացնելուս պատճառն՝ այս աւուր ձեր մեզ համար գործած մեծ բարերարութեան փոխադարձ մի առնելու համար է։ Ֆորթօնի ազդեցութիւնն մեծ է Փարիզու մէջ. արքունեաց և Թագաւորական կառավարութեան թշնամի լինելով՝ խռովութեան կողմն բռնած է, և դաշնադրութեան պարագլխոց հետ սերտ բարեկամութեամբ կապուած է. ուստի լսելով ձեր աներկիւղ արդարութեամբ իւր աներն պաշտպանելն՝ անշուշտ ձեզ ալ մահացու թշնամի պիտի դառնայ։ Աստուած տայ որ օր մի չզղջաք մեր վրայ ցուցած խնամոցդ վրայ։

— Մի երկնչիք ամենևին, տիկին, ասաց Ժերվալ եռանդեամբ, ինչ ալ ըլլի թող ըլլի։ Բայց փու-

digitised by A.R.A.R.@

թացէք․ ժամանակն կարճ է․ ահաւասիկ ազատութեան հրամանագիրն․ կարելի է որ բարձրագոյն հրաման մի ինձ հասնելով՝ բարի կամքս պարապ ելնէ։ Ձեզ խորհուրդ մի չեմ կարող տալ, բայց ինչ ձեռնարկութիւն որ առնէք ապագային համար՝ սրտանց կը փափաքիմ որ յաջողի և ապահով լինիք․ այնպիսի ժամանակի մի մէջ եմք որ զապահովութիւն միայն փափաքելու եմք մեզ և այլոց համար․ վասն զի անցք և դէպք զմեզ կը մղեն և կը տանին և մեր ձեռքն չէ ուղղելն զնոսին։

Մարքիզուհին և բերդակալն իրարմէ բաժնուեցան՝ իրարու յարգութեամբ քաղաքավարութիւններ առնելէն ետև՝ և զիրար նորէն տեսնելու ամենևին յոյս չունէին։ Բանտապանն բերդակալին ազատութեան թուղթն տեսնելով մարքէզին ազատ թողուց, որ վազեց եկն իր ընտանեաց քով որ էին իւր կինն և աղջիկն։ Երբ իր փեսին նենգութիւնն իմացաւ՝ բոլորովին վըստահութիւնն վերցաւ, և նմա այնպէս կերևէր թէ Ցորթոն իւր կինն ալ համոզած էր իւր չար խորհրդոցն՝ իրեն ստացուածքն բոլորովին յափշտակելու համար․ Նոյն օրն փոքրիկ ժողով մի գումարելով, Տիւպուսն ալ խորհրդի կոչեց, որոյ հաւատարմութիւնն այնպիսի սրտանց փորձերով իմացած էր։ Հոն շատ խօսակցութիւն եղև թէ արդեօք նորէն Փարիզ դառնան, թէ Արտան բնակին, թէ օտար երկիր ապաւէն մի փնտռեն․ Փարիզ դառնալն ուրիշ բան չէր՝ բայց եթէ իւր գլուխն կառափնատեղւոյն տանիլ, կամ գէթ նորէն բանտի դռներն բացուած տեսնել․ մանաւանդ որ սեպտեմբերի 2ին եղած ջարդին լուրն նախընթաց իրիկուն հասած էր Արտան քաղաքն, որով մարդուս յօժարութիւն չէր գար երթալու մայրաքաղաքն բնակելու։ Իսկ այս անցքերէն ետև Արտան բնակիլն ալ շատ վտանգաւոր էր, և վախ կար ժողովրդեան խելքն փչածին պէս՝ նորա առաջին զոհերն լինելու։ Ո՞ւր երթալու էր ուրեմն․ յիրաւի օտար երկրի մէջ հանգստութիւն կարող էին գտնել, բայց այս հանգստութիւնս գտնելու համար ալ ամեն ունեցածն զոհելու էր։ Իրաւցնէ Աննա այս առաւօտ հարուստ էր, բայց միթէ կը վայլէր ստիպել զինքն որ իւր ամեն ունեցածն թողու և իրենց հետ պանդխտութիւն քաշէ․ թէպէտ և ինքն պատրաստ էր իր ծնողաց հետ ամեն տեղ երթալու թէ Փարիզ և թէ Քոպլէնց, ինչպէս որ ասէր, Փարիզու մէջ ամեն վտանգ ու նաև մահ աչքն առնլով, իսկ Քոպլէնցի մէջ ամեն աղքատութ այլ և թշուառութիւն։ Անշուշտ շատ մեծ զոհողութիւն էր Աննայի գործածն, որոյ համար իւր ծնողքն զիրենք երախտապարտ կը ճանաչէին՝ սէր ընդ սիրոյ փոխանակելով․ բայց որչափ որ Աննա աւելի սէր կը ցուցանէր նոցա, նոքա ևս առաւել կը քաշուէին նմա բեռ լինելէ։

Վերջապէս շատ վիճաբանելէն ետև՝ որոշեցին որ գաղտնի իրենց ճամբուն պատրաստութիւնն տեսնեն, և երկու օրէն գիշերանց ճամբայ ելնեն՝ ապահով մարդիկ իրենց հետ առնլով և նոցա հաւատարմութիւնն ճոխաբար վարձատրելով, և սահմանագլուխն անցնելէն ետև տեղ մի մնան․ իսկ Տիւպուսն իր տիրոջմէն գործակատարութեան թուղթ առած՝ անմիջապէս Փարիզ դառնայ և ինչ որ կարէ ձեռք ձգել ու ազատել առնու գայ։ Ուրիշ կողմանէ մարքէզն համոզուած լինելով թէ թագաւորազունք օտար տէրութիւններէ օգնութիւն գտնելով սակաւ ժամանակէն Փրանկիա պիտի մտնեն և միապետութիւնն նորէն պիտի հաստատեն, և խռովարարաց ուժն պիտի կոտրեն, միտքն դրած էր թէ իրենց պանդխտութիւնն երկար պիտի չտևէր։ Մանաւանդ որ օտար երկիր անցնիլն՝ արդէն աքսորուածներու համար՝ միակ ճամբայ էր ազատութեան և փրկութեան․ իրաւ խռովարարներն շատուոր չէին, բայց իրենց յանդգնութեամբն ամեն պաշտօն և իշխանութիւն ձեռքերնին անցուցել էին, ուժերնին շատ էր․ այնպէս որ բաց 'ի արևմտեան քանի մի գաւառներէ՝ ուր թագաւորականք աւելի ուժով էին՝ յեղափոխականաց ձեռքն եղած բովանդակ Փրանկիա՝ արքային մտերմաց համար ուրիշ բան չէր բայց եթէ ընդարձակ սպանդանոց մի։ Միանգամայն թագաւորականաց Փրանկիոյ մէջ բնակելովն ինչ օգուտ կարէր լինել իրենց, երբ միշտ լրտեսներու աչաց ներքև հալածուելով ու անբան անասնոց պէս չարչարուելով իրենց թագաւորին ալ ձեռնտուութիւն մի չէին կարող առնել, որ այնչափ բարեսրտութ̄ բայց միանգամայն այնչափ անխոհեմութեամբ ինքզինք իւր անգութ թշնամեաց ձեռք վստահացել էր․ և հիմա իւր ազատութենէն զրկուած՝ ցաւալի հոգեվարքի մի մէջ իր մահուան վճռոյն կը սպասէր՝ զոր պիտի վճռէին իւր ամբաստանողներն՝ դատաւորաց կարգ անցնելով յամօթ և 'ի սարսափ ազգաց և ազանց։

Կը շարունակուի․

Տը Մարլէս